

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայացվում է ք.Երևանի կենտրոնի նորակառույց և գոյություն ունեցող շենքերի բարձրությունների կտրուկ տարբերությունների հիմնախնդիրները, ինչպես նաև կենտրոնում բազմահարկերի առաջացման դրդապատճառները և նրանց ազդեցությունը շրջապատի կերպարային առանձնահատկությունների վրա: Բերվում են համեմատական տվյալներ արտասահմանյան մի շարք քաղաքների կենտրոններում բազմահարկերի հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի արձագանքների մասին: Ք.Երևանի կենտրոնի տեսողական ընկալման ճարտարապետական չափանիշները հստակեցնելու նպատակով առաջարկվում են շենքերի բարձրությունները կարգավորելու որոշ չափորոշիչներ:

Առանցքային բառեր. ք.Երևանի կենտրոն, արտասահմանյան քաղաքներ, բազմահարկեր, ՅՈՒՆԵՍԿՕ, գործարար թաղամաս, շենքերի գերիշխող բարձրություն

Ք.Երևանի պատմականորեն ձևավորված քաղաքաշինական միջավայրի կտրուկ փոփոխություններն առաջացան տնտեսական նոր իրադրության ի հայտ գալով: Տնտեսահամակարգի փոփոխությունն անմիջականորեն ազդեց քաղաքաշինության զարգացման վրա և թելադրեց զարգացման սեփական կանոնները: Աշխարհի մի շարք քաղաքների քաղաքաշինության զարգացման դինամիկան ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ տնտեսահամակարգերի փոփոխություններն ավելի մեղմ ճանապարհով են ընթացել, իշխում է համեմատաբար ներդաշնակ և միջավայրին համահունչ քաղաքային կառուցապատում: Ք. Երևանի դեպքում տնտեսահամակարգերի հեղափոխական հաջորդումներն անմիջական ազդեցություն են ունենում քաղաքաշինության և ճարտարապետության վրա: Վերջին տասնամյակներում կենտրոնում հայտնված բազմահարկերի քաղաքաշինական և կերպարային ազդեցության մեծ հավակնություններ է տաժում՝ փոխելու պատմական միջավայրի դեմքը, որ ձևավորվել է 20-րդ դարում:

Աշխարհի գրեթե բոլոր մեգապոլիսներն ունեն գործարար կենտրոններ, որտեղ քաղաքաշինության կերպարն ակնհայտորեն նշմարելի է վերջիններիս վերապահ ճարտարապետական ձևերի շնորհիվ: Տնտեսական շահութաբերության և կոմերցիոն գործոնների ճնշման տակ այս քաղաքաշինական միավորներն աշխարհի տարբեր քաղաքներում նման են միմյանց և ստացել են միատեսակ կերպարային դրսևորումներ [1]: Մակայն եթե քաղաքների գործարար կենտրոններում բազմահարկերի առաջացումը կապված է քաղաքային տարածության սակավության ու հողի բարձր գնի հետ և հանդես է գալիս որպես առանձին քաղաքաշինական միավոր, ապա ք.Երևանում այդպես չէ: Այստեղ բազմահարկ

շենքերի առաջացման պատճառները բացառապես տնտեսական շահ ստանալու արդյունք են և գրեթե կապ չունեն քաղաքային տարածքի սուղ հողային ռեսուրսների պահպանման տրամաբանության հետ:

Ք.Երևանն առայժմ գործարար թաղամաս, որպես այդպիսին, չունի, ուստի այս կազմավորումների գործառույթը ներառված է բազմաբնակարան բնակելի տների ծավալային հորինվածքում կամ բազմահարկ բազմաֆունկցիոնալ շենքերում, որոնց քաղաքի կենտրոնում կառուցելու շարժառիթներն անշարժ գույքի կապիտալի շուկայում մեծ շահույթի ակնկալիքն է: Սրանով է պայմանավորված նաև նորակառույցների տարածքների չարդարացված մեծությունը և կերպարային միօրինակությունը: Այս շենքերի բարձրությունը սահմանափակվում է միայն շինարարական տեխնոլոգիական ներկայիս հնարավորությունների սղության պատճառով: Բարձրության նիշի սահմանափակումը որևէ կերպ իրավական ակտով նախատեսված չէ: Նոր տեխնոլոգիաների կիրառման պարագայում կառուցապատողը կկառուցի անհամեմատ ավելի բարձր շենքեր:

Ք.Լոնդոնի Լյոյդ-սթրիթ թաղամասում գործարար կենտրոնի բազմահարկ շինությունների և կազմավորումների ճարտարապետության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ բազմահարկերը շրջապատի գերիշխող բարձրությունից անհամեմատ բարձր լինելով, ունենալով գերժամանակակից ճարտարապետական հորինվածքներ (ճարտարապետներ՝ Ռ.Ռոջերս, Ն.Ֆոստեր և այլք), հակադրվում են գոյություն ունեցող պատմականորեն ձևավորված ճարտարապետական խայտաբղետ ոճերին: Սրանք ներգծված են քաղաքի հյուսվածքի մեջ և պատմական կենտրոնում տեղակայված են որպես հների հետ համարժեք իրավունքներով օբյեկտներ (նկ.1):



Նկ. 1. Լյոյդ-սթրիթ գործարար կենտրոնը, ք.Լոնդոն, Մեծ Բրիտանիա



Նկ. 2. Շարդ Լոնդոն Բրիջ երկնաքերը, ք.Լոնդոն, Մեծ Բրիտանիա

Քաղաքի այդ հատվածը զբոսաշրջիկների պարտադիր այցելությունների ցանկում է: Մակայն ՅՈՒՆԵՍԿՕ-ն մտահոգություն է հայտնել նման կառուցապատման վերաբերյալ, մասնավորապես ք.Լոնդոնում կառուցվող Եվրոպայի ամենաբարձր «Շարդ Լոնդոն Բրիջ»

(Ճարտ. Ռ. Պյանո, բարձ. 310ւ) կոչվող աշտարակի կառուցումը համարելով ոչ հարիր քաղաքի պատմական միջավայրին (նկ.2): Առհասարակ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ք.Լոնդոնը համարում է պատմական ժառանգության պահպանման հարցերում ամենաանփույթ վերաբերմունքն ունեցող քաղաքը Եվրոպայում՝ Թեմզա գետի երկայնքով պատմական կառուցապատման ենթատեքստից դուրս հայտնված բազմաթիվ ժամանակակից շենքերի պատճառով [2]:

Բսպանիայի Սևիլիա քաղաքում, պատմական կենտրոնի հարևանությամբ նախատեսվող երկնաքերի կառուցումը միանշանակ չի ընդունվել ոչ միայն տեղի, այլև միջազգային հանրության կողմից (նկ. 3):



Նկ. 3. Պուերտո Տրիանա աշտարակը ք.Սևիլիայում, Բսպանիա

Պատմական հուշարձանների պահպանման իրավունքի պահանջներից ելնելով, ՅՈՒՆԵՍԿՕ-ն զգուշացրել է իշխանություններին, որ երկնաքերը («Պուերտո Տրիանա» աշտարակը՝ 40-հարկանի, 178ւ՝ բարձրությամբ) բացասական ազդեցություն ունի պատմական հուշարձան հանդիսացող քաղաքային միջավայրի վրա, և դրա կառուցումը կասկածի տակ է դնում ք.Սևիլիայի պատմական կենտրոնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում մնալու հարցը [2]:

Նման օրինակները շատ են արտասահմանում:

Հետխորհրդային գրեթե բոլոր քաղաքներում նույն իրավիճակն է, և հանրությունը տարբեր ձևերով ընդդիմանում է: Շենքերի չափից ավելի բարձր լինելը հանրության կողմից ընկալվում է որպես բացասական (խանգարող) գործոն քաղաքային միջավայրի գեղագիտական ընկալման համար: Դանիացի ճարտարապետ Յ. Գեիլի կարծիքով, կցաշար կառուցապատման մեջ մարդն ընկալում է շենքերի բարձրության մինչև 31ւ՝-ը, այսինքն՝ 6...10 հարկերը: Շենքի մնացած բարձրությունը փողոցից ընկալելի չէ [3]: Հատկանշական է, որ Հին Հռոմի կառուցապատման մեջ Օգոստոս Օկտավիանոսի կողմից բարձրության սահմանափակում ընդունված էր 70 *քուտը*՝ 21ւ՝ - ը [4]:

Սխեմատիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի առաջին կեսում ք.Երևանի կենտրոնի սակավահարկությունը, որ ձևավորված էր նախորդ դարերում, խորհրդային ժամանակների սկզբնական փուլում կտրուկ վեր է սլանում՝ միջին (առավելապես 5 հարկ) հարկայնությամբ շենքերի ու շինությունների կառուցմամբ: Հետագայում կենտրոնի ներբակային տարածքներում աճում են գեղարվեստական կերպարի առումով հավակնություններ չունեցող, սակայն բարձրության առումով նախահարձակ բազմահարկ շենքեր (նկ. 4):




Նկ. 4. Բազմահարկ բնակելի շենքեր, կառուցված ԽՍՀՄ տարիներին (Մաշտոցի պող. հարող թաղամասեր)



Նկ. 5. Բնակելի շենքեր՝ կառուցված նոր ժամանակներում, Սայաթ-Նովա փող.

Ներկայում կառուցապատումն իրականացվում է կենտրոնում ազատ տարածքների «հայտնաբերման» տրամաբանությամբ: Բացակայում է «տեղի» համընդհանուր յուրահատկությունների վերլուծությունը: Կառուցապատումը դիտարկվում է բացառապես նախագծային (հորինվածքային) լուծումներով գտնված հնարավորությունների համատեքստում (նկ.5):

Շենքերի բարձրության տատանումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ք.Երևանի կենտրոնի շենքերի գերիշխող բարձրությունը տատանվում է որոշակի սահմաններում: Այսպես. եթե կցաշար կառուցապատման մեջ գերիշխող բարձրությունը պայմանականորեն բաժանվի երեք հավասար մասերի, ապա դրա մի մասը՝ a չափով հիմնական վերազանցման չափն է գերիշխող բարձրությունից վերև: Հանդիպում են նաև $2a$ չափով վերազանցումներ: Մակայն կցաշար կառուցապատման մեջ գրեթե չեն հանդիպում $2a$ -ից ավելի վերազանցումներ (նկ. 6, 7):




Նկ. 6. Բարայեկյան վանդ.



Նկ. 7. Մաշտոցի պող.


Նոր ժամանակներում իրականացված շենքերի բարձրության տատանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքի ուրվագծի մշակված հայեցակարգը բացակայում է: Այստեղ վերազանցումները գերազանցում են 2a չափը (նկ. 8-10):



Նկ. 8. Արամի պող.




Նկ. 9. Արամի պող.



Նկ. 10. Բյուզանդի պող.

— Գերիշխող բարձրություն
 - - - - - Վերազանցող բարձրություն

Կատարելով նույն վերլուծությունը արտասահմանյան մի քանի քաղաքների կենտրոնների կցաշար շենքերի բարձրությունների վերաբերյալ, պարզվում է, որ այդտեղ նույնպես վերազանցումները չեն գերազանցում գերիշխող բարձրության 2/3-ը, այսինքն՝ վերազանցումները 2a-ի սահմաններում են (նկ.11-14): Այդ քաղաքներում կցաշար (պարագծային) կառուցապատման մեջ նոր թաղամասերի կամ օբյեկտների իրականացման ժամանակ գրեթե չեն նկատվում ընդհանուր ուրվագծից կտրուկ տատանումներ:




Նկ. 11. Ք.Կոպենհագեն, Դանիա



Նկ. 12. Ք.Մարսել, Ֆրանսիա



Նկ. 13. Ք.Գդանսկ, Լեհաստան



Նկ. 14. Ք.Ստոկհոլմ, Շվեդիա

— Գերիշխող բարձրություն
 - - - - - Վերազանցող բարձրություն

Համադրելով այս վերլուծությունները կարելի է փաստել, որ ք.Երևանի կենտրոնի կցաշար կառուցապատման մեջ շենքերի բարձրության սահման կարելի է համարել գերիշխող բարձրության 2/3-ից ոչ ավելին, այսինքն մոտ 30մ-ը կամ մինչև 7...9 վերգետնյա հարկերը: Շենքերի բարձրությունների վերլուծության այս մոտեցումն ունի խորհրդատվական բնույթ և կարող է կիրառվել նախագծային առաջադրանքներում:

ПРОБЛЕМЫ УРЕГУЛИРОВАНИЯ ВЫСОТ ЗДАНИЙ ЦЕНТРА ЕРЕВАНА

Представлены основные проблемы резких перепадов высот между новостройками и существующими зданиями в центре г.Еревана, а также причины появления многоэтажных зданий в центре города и их влияние на образ среды. Представлены сравнительные данные об отношении международного сообщества и реакция ЮНЕСКО относительно многоэтажных зданий в центре некоторых иностранных городов. Предлагаются способы урегулирования высот зданий с целью прояснения критериев архитектуры, определяющих визуальное восприятие центра г.Еревана.

Ключевые слова: центр г.Еревана, зарубежные города, высотные здания, ЮНЕСКО, деловой квартал, преобладающая высота зданий

А.М.Manukyan

THE PROBLEMS OF BUILDINGS HEIGHT REGULATION OF THE CENTRE OF YEREVAN

The main problems of sharp difference of heights between the newly built buildings and the existing ones as well as the reasons of constructing multistoried buildings in the city center and their influence on the features of the environmental picture are presented. The comparative data of the international public attitude and the UNESCO's responses about the multistoried buildings located in the centers of a number of foreign cities are presented. In order to clarify the architectural criteria of the visual perception of the center of Yerevan city, some standards regulating the heights of the buildings are proposed.

Keywords: center of Yerevan, foreign cities, multistoried buildings, UNESCO, business district, the dominant height of buildings

Գրականություն

1. **Фрисби Д.** Разрушение города: социальная теория, мегаполис и экспрессионизм: пер. с англ. И. Мюрберг // Логос. - М., 2002. - №3-4 - Режим доступа: <http://magazines.russ.ru/logos/2002/3/fris.html>.
2. Наследие разных лет. - Режим доступа: http://archi.ru/foreign/news/news_present.html?nid=39333 (02.02.2012).
3. **Гейл Ян.** Города для людей: пер. с англ. - М.: Концерн КРОСТ, 2012. – 276 с.
4. **Саваренская Т.Ф.** История градостроительного искусства. - М.: Стройиздат, 1984. – 385 с.

Մանուկյան Արթուր Մարտիկի, ճարտ. թեկն. (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, փոխտեղն, (+374) 91205234, a.manukyan.architect@mail.ru
Манукян Артур Мартикович, канд. архит. (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, ассистент, (+374) 91205234, a.manukyan.architect@mail.ru
Manukyan Artur Martik, doctor of philosophy (Ph.D.) in Architecture (Yerevan, RA) - NUACA, Chair of Architecture Design and Design of Architectural Environment, assistant, (+374) 91205234, a.manukyan.architect@mail.ru

Ներկայացվել է՝ 09.03.2017թ.

Ընդունվել է տպագրության՝ 15.03.2017թ.